ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, դրանց նմուշ-օրինակները, պատասխանների գնահատման չափանիշները, առաջադրանքներում ընդգրկվելիք նյութի շրջանակները:

Թեստավորումն անցկացվում է համակարգչային եղանակով, տևողությունը՝ 180 րոպե:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ:

- Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի դեպքում առաջադրանքին տրվում է 1 միավոր:

- Կարճ պատասխանով առաջադրանքները հետևյալ տեսակների են.

  - Ճիշտ հաջորդականության
  - Համապատասխանեցման
  - Բաց թողնված միավորների ընտրության
  - Ըստ առաջադրանքի պահանջի բոլոր ճիշտ կամ սխալ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներ: Այդ առաջադրանքներում տրվում են 7 պնդումներ, շարքեր և այլն, որոնցից պահանջին համապատասխանում են մի քանիսը: **Ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում:**

Կարճ պատասխանով առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է նշել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ և լիարժեք պատասխանը: Սխալ, թերի կամ ոչ ամբողջական պատասխանի դեպքում միավոր չի տրվում:
Առաջադրանքին տրվում է 1 միավոր, եթե ճիշտ են նշված պահանջին համապատասխանող բոլոր միավորները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Տեսակ	Քանակ	Միավոր
Ընտրովի պատասխանով	45	45
Կարճ պատասխանով	15	15
Ընդամենը	60	60

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ընտրովի պատասխանով առաջադրանք՝

In welcher Reihe gibt es <u>keinen</u> Fehler? (1 Punkt)

1. eine Frage - machen, stellen, formulieren
2. ein neues Wort - verwenden, gebrauchen, lernen
3. beruflichen Erfolg - gewinnen, haben, erzielen
4. einen guten Eindruck - machen, spielen, hinterlassen

Կարճ պատասխանով առաջադրանքներ՝

- **Schreiben Sie die Nummer der Textteile sinngemäß. (1 Punkt)**

1. Er bekam die Stelle und freute sich auf seinen Umzug nach Italien. Jetzt lebt Daniel seit einigen Monaten in Rom.
2. Er hat sich schon gut an sein neues Leben gewöhnt und seine neuen Arbeitskollegen kümmern sich sehr nett um ihn.
3. Nachdem er seine Bewerbungsunterlagen abgeschickt hatte, wartete er ungeduldig auf eine Antwort.
4. Daniel träumte schon lange von einem Auslandsaufenthalt, deshalb bewarb er sich letztes Jahr bei einer italienischen Firma.
5. Vier Wochen später wurde er tatsächlich zu einem Vorstellungsgespräch eingeladen.

- **Kombinieren Sie. (1 Punkt)**

A. Der deutsche Epos heißt _____ .
B. Die Bibel wurde von _____ übersetzt.
C. Das Drama „Faust“ hat _____ geschrieben.
D. Deutschland ist ein _____.
E. Der bekannte deutsche Dichter _____ war ein Märchenerzähler.

1. Wilhelm Hauff
2. Johann W. Goethe
3. Bundesland
4. Heinrich Heine
5. Schwarzwald
6. das Nibelungenlied
7. Martin Luther

- **Füllen Sie den Lückentext mit den angegebenen Satzteilen sinngemäß aus. Passen Sie auf: Es gibt mehr Satzteile als Lücken. (1 Punkt)**

Was wäre die Welt ohne Musik? Niemand möchte sich das vorstellen, denn Musik ist _____. Wir Menschen verfügen über die Fähigkeit, _____. Viele Wissenschaftler _____, dass den Menschen diese Fähigkeit angeboren ist. Sie glauben, Musik sei noch _____, dass Musik sozusagen Mutter der Sprache ist. Andere vermuten, Musik und Sprache _____ entwickelt.

1. Musik wahrnehmen
2. ein Teil unserer Kultur
3. gehen davon aus
4. Töne zu erzeugen und zu erkennen
5. vor der Spache entstanden
6. sie wirkt auf unsern Körper
7. hätten sich parallel

- **In welchen Reihen bekommen *alle* Verben bei der Bildung des Partizips II ge-. (1 Punkt)**

1. zerstören – übersetzen - umsteigen
2. missverstehen – bestehen - zerstören
3. heimkommen – darstellen - beibringen
4. wiedersehen – umdrehen - vorausschicken
5. renovieren – vorbestellen - überzeugen
6. fernsehen – weitersetzen - unterbringen
7. vorstellen – vorbeikommen - vorhersagen

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվում «Գերմաներեն» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը, չափորոշիչները և գործող դասագրքերը:

Տեքստի ընկալում

Ուղղագրություն

Բառագիտություն

Բառակազմություն: Ածանցում, բառաբարդում, գոյականակերտ, ածականակերտ, թվականակերտ, բայակերտ նախածանցներ և վերջածանցներ:

Բառապաշար: Բառեր և իդիոմատիկ արտահայտություններ (կայուն բառակապակցություններ), բազմիմաստ բառեր, հոմանիշներ, հականիշներ և համանուններ:

Ձևաբանություն

Հոդ: Հոդի տեսակները, հոլովումը, գործածությունը: Որոշյալ հոդի ձուլումը նախդիրների հետ: Հոդի բացակայությունը:

Գոյական: Գոյականների սեռը, թիվը և հոլովումը: Նախադասության մեջ գոյականների գործածությունը տարբեր հոլովներով: Գոյականի բառակազմությունը:

Ածական անուն: Ածականների շարահյուսական գործառույթները: Ածականի հոլովումը: Ածականների համեմատության աստիճանների կազմությունը և կիրառումը: Ածականի բառակազմությունը:

Դերանուն: Տեսակները, նրանց հոլովումը, բառակազմությունը, գրությունը և գործածությունը:

Թվական: Թվականի տեսակները: Թվականի բառակազմությունը:

Բայ: Բայի տեսակները, լիիմաստ, օժանդակ և եղանակավորող բայեր, կանոնավոր և անկանոն բայեր, ուժեղ և թույլ բայերի ժամանակային ձևերի կազմությունն ու գործածությունը՝ **Präsens, Präteritum, Perfekt, Plusquamperfekt, Futurum** ժամանակներով: Բայի խոնարհումը: Բայի սեռը, Aktiv-Passiv փոխակերպում: Բայի եղանակը: Բայի անվանական ձևեր, դերբայական դարձվածներ: Բայերի բառակազմությունը:

Մակբայ: Մակբայների իմաստային և շարահյուսական գործառույթները: Մակբայների համեմատության աստիճանների կազմությունը: Դերանվանական մակբայներ: Մակբայների տեղը նախադասության մեջ:

Նախդիր: Նախդիրների տեսակները, խնդրառությունը, **Genitiv, Dativ, Akkusativ, Dativ և Akkusativ** պահանջող նախդիրներ: Նախդիրների և հոդի ձուլում:

Շաղկապ: Համադասական և ստորադասական շաղկապներ: Բարդ շաղկապներ: Որպես շաղկապ օգտագործվող հարաբերական դերանուններ:

Եղանակավորող բառ-մասնիկներ:

Ձայնարկություն:

Շարահյուսություն

Նախադասությունների դասակարգումն ըստ հաղորդակցական տիպերի: Պարզ և բարդ նախադասություններ:

Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ: Նրանց համաձայնեցումը և շարադասությունը:

Ժխտականի դիրքը նախադասություն մեջ: **Nicht** մասնիկը: Ժխտում nein-ի, դերանվան, ժխտական կամ այլ բառերի միջոցով: Բազմակի ժխտում, կրկնակի ժխտում:

Բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ, գործածությունը, երկրորդական նախադասության տեսակները, շարադասությունը:

Man, es դերանուններով արտահայտված ենթակայով նախադասությունների գործածությունը:

Ուղղակի խոսքի փոխակերպումը անուղղակի խոսքի և հակառակը: